

ԾՐԱԳԻՐ
 «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Արցախի Հանրապետությունում անօթևան մնացած ընտանիքների համար Ստեփանակերտ քաղաքում կառուցվող բազմաբնակարան շենքերի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում կառուցվող բազմաբնակարան տների շահառուների համար թվով 102 հատ սառնարանների և 300 հատ լվացքի մեքենաների ձեռքբերում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ք. Գյումրի, սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	55,572,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության անօթևան մնացած ընտանիքներ և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում կառուցվող բազմաբնակարան տների շահառուներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	18 փետրվարի 2022 թ., ավարտը 19 ապրիլի 2022 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,	Նախատեսվում է Արցախի Հանրապետությունում անօթևան մնացած ընտանիքների համար Ստեփանակերտ քաղաքում կառուցվող բազմաբնակարան շենքերի շահառուների և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում կառուցվող

	անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	բազմաբնակարան տների շահառուների համար ստոնարանների և լվացքի մեքենաների ձեռքբերում: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 18 փետրվարի 2022 թ., ավարտը՝ 19 ապրիլի 2022 թ.: Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 55,572,000 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսվում է «Indesit» IWSB 5085 (CIS) մոդելի լվացքի մեքենաների և «Indesit» ES 18 մոդելի ստոնարանների ձեռքբերում: Ստեփանակերտ քաղաքում կառուցվող բազմաբնակարան շենքերի շահառուների համար թվով 62 հատ ստոնարան՝ 11,532,000 դրամ, թվով 260 հատ լվացքի մեքենա՝ 31,720,000 դրամ, Գյումրի քաղաքում կառուցվող բազմաբնակարան տների շահառուների համար թվով 40 հատ ստոնարան՝ 7,440,000 դրամ և թվով 40 հատ լվացքի մեքենա՝ 4,880,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ